«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1

28 օգոստոսի 2019 թվականի

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N 1 արձանագրությամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգում» լրացումներ կատարելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1718-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 1-ին ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, «Կրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասով և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2015 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի N 1 արձանագրությամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգում» (այսուհետ՝ կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) 4-րդ կետի 4-րդ ենթակետը «դոցենտների» բառից հետո լրացնել «, ասիստենտների և դասախոսների» բառերով:
2) 22-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22.1-ին և 22.2-րդ ենթակետերով.

   «22.1. Պրոֆեսորների ընտրությունն իրականացվում է հետևյալ կարգով.

   1) Գիտական խորհրդին ներկայացվում են բոլոր այն հավակնորդների թեկնածությունները, ովքեր հավաքել են «Հայաստանի պետական

տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2019 թվականի ապրիլի 30-ի նիստի N 11 արձանագրությամբ հաստատված ««Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտամանկավարժական կազմի ընտրության և տեղակալման կանոնակարգի» (այսուհետ՝ տեղակալման կանոնակարգ) համաձայն նվազագույն միավորը, և որոնք տեղակալման կանոնակարգի պահանջների և դրա N 3 հավելվածի չափանիշների համաձայն հանձնաժողովի կողմից ընտրվել են առնվազն մեկ դասընթացի համար:

2) Համալսարանի գիտական քարտուղարը մրցութային հանձնաժողովից ստանում է փաստաթղթերը և ներկայացնում է գիտական խորհրդին:
3) Գիտական խորհրդի նախագահը կամ նիստը վարողը ընտրված հավակնորդների վերաբերյալ տվյալները և հանձնաժողովի որոշումները ներկայացնում է գիտական խորհրդին՝ փակ գաղտնի քվեարկության դնելու համար:
4) Գիտական խորհրդի նիստին պրոֆեսորի պաշտոնի հավակնորդների ներկայությունը պարտադիր չէ: Քննարկումներից և ելույթներից հետո ինքնաբացարկ չհայտարարած հավակնորդների ազգանունները, գիտական խորհրդի որոշմամբ, գրվում են քվեաթերթիկներում:
5) Նախագահը գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ գաղտնի քվեարկության կարգը: Խորհրդի անդամների առաջարկով, փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար, գիտական խորհրդի որոշմամբ, խորհրդի անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս (կենտ թվով) հաշվիչ հանձնաժողով: Հավակնորդները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
6) Գիտական խորհրդի կազմի յուրաքանչյուր անդամի տրվում է մեկական քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է քվեարկության ցուցակում: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:
7) Ընտրված է համարվում գիտական խորհրդի նիստին մասնակից անդամների ձայների կեսից ավելին ստացած հավակնորդը:

22.2. Գիտամանկավարժական կազմի (բացառությամբ պրոֆեսորների) ընտրությունն իրականացվում է հետևյալ կարգով.

1) Թեկնածուների քննարկման համար ներկայացվում են մրցույթների արդյունքները, որին հետևում է քննարկում:
2) Գիտական խորհրդին ներկայացվում են բոլոր այն հավակնորդների թեկնածությունները, ովքեր հավաքել են տեղակալման կանոնակարգի համաձայն նվազագույն միավորը, և որոնք տեղակալման կանոնակարգի պահանջների և N 3 հավելվածի չափանիշների համաձայն հանձնաժողովի կողմից հաղթող են ճանաչվել առնվազն մեկ դասընթացի համար:
3) Քննարկման ավարտից հետո քվեարկության է դրվում մրցութային հանձնաժողովների գործունեության արդյունքներում ձևավորված՝ միասնական ցուցակը ներառող քվեաթերթիկ, որում նշվում են տեղակալման կանոնակարգով սահմանված նվազագույն միավոր հավաքած և առնվազն մեկ դասընթացի գծով հաղթող ճանաչված հավակնորդները:
4) Նախագահը գիտական խորհրդի անդամներին ներկայացնում է փակ գաղտնի քվեարկության կարգը: Խորհրդի անդամների առաջարկով, փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար, գիտական խորհրդի որոշմամբ, խորհրդի անդամներից ընտրվում է 3 հոգուց ոչ պակաս (կենտ թվով) հաշվիչ հանձնաժողով: Հավակնորդները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
5) Գիտական խորհրդի կազմի յուրաքանչյուր անդամի տրվում է մեկական քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է քվեարկության ցուցակում: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2019 թ. օգոստոսի 28
Երևան